ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

(ծածկագիր 3.2-2):
1-ին կարգի մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ՝
ա/կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև
բ/առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
գ/Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկայի եկամուտների տեղեկատվական շտեմարանի հետ կապված աշխատանքները: իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
1-ին կարգի մասնագետի պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝
միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի.
դ/«ՀՀ Սահմանադրության», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկելու կարգի մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
ե/ համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

2. Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-2):
2-րդ կարգի մասնագետը՝
ա/կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
բ/ապահովում է Աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
գ/մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով աշխատանքներին, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություն զինզպարտների վերաբերյալ ցուցակը, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալներ տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար.
դ/իր իրավասության սահմաներում մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.
ե/ իրենց պարտականությունները խախտված զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է աշխատակազմի քարտուղարին.
զ/ նախապատրաստում , կազմակերպում և անցկացնում է մշակույթային, պետական , ազգային տոների հետ կապված միջոցառումներ.
է) «ՀՀ Սահմանադրության», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Զինապարտության մասին», «Զորահավաքների նախապատրաստման և զորահավաքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների,

աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
ը/իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
թ/ 2-րդ կարգի մասնագետն ունի այլ իրավունքներ ու պարտականություններ՝ համաձայն պաշտոնի անձնագրի:

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է ՝
ա) միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի.
բ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
2.Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),
բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
դ) հայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
ե) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12–րդ հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,
զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),
է) անձնագրի պատճենը:
Մրցույթներին մասնակցելու համար դիմողները փաստաթղթերը պետք է ներկայացնեն անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Արևաշատի համայնքապետարանում և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր, ժամը 10:00ից մինչև 17:00-ն՝ բացի շաբաթ, կիրակի օրերից:
Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերը և պատճենները ետ չեն վերադարձվում:
Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արևաշատի համայնքապետարանի աշխատակազմ (գ. Արևաշատ, հեռ.՝ 098-44-33-08) և ք. Արմավիրի Աբովյան 71 մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն
հեռ. 0237-2-07-70, 0237-2-76-49 :
Մրցույթները կկայանան 2016թ. Օգոստոսի 4-ին ժամը 12:00-ին և 14: 00-ին Արևաշատի համայնքապետարանի շենքում:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2016թ. Հուլիսի 22–ը:
Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ գ. Արևաշատ Երևանյան խճղ. թիվ 16
Հեռ..՝ +374 98-44-33-08
Էլ. փոստ՝arevashatgyux@mail.ru